

**20 Ապրիլի 2022թ. թողարկման վերջնական պայմանների փոփոխություն
առ 20 Հուլիսի 2022թ.**

Ինեկոբանկ ՓԲԸ

**անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի
պարտատոմսեր**

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված 26 նոյեմբերի 2021թ., ՀՀ ԿԲ-ում՝ ՀՀ ԿԲ նախագահի 26.11.2021թ. թիվ 1/609Ա որոշում), դրա լրացումները և թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են **www.inecobank.am** հասցեում:



| | | |
|--|--|--|
| <p>Ընդհանուր տեղեկություններ Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)</p> | | |
| 1. | Թողարկողը (թողարկողի անվանումը) | Ինեկոբանկ ՓԲԸ |
| 2. | Երաշխավորողը | Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր: |
| 3. | Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը) | 2022-1 |
| 4. | Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը | 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ |
| 5. | Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության | Մանրամասն ներկայացված է Ազդագրի 2.3. կետում՝ «Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն»: |
| 6. | Թողարկման արժույթը | ՀՀ դրամ |
| 7. | Առաջարկի գինը | Պարտատոմսերի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով. |

| | | |
|--|---|--|
| | | $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>որտեղ՝ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է: DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է, N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց y - մինչև մարում եկամտաբերություն</p> |
| 8. | Անվանական արժեքը | 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ |
| 9. | Քանակը | 300,000.00 (երեք հարյուր հազար) հատ |
| 10. | Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները) | 28 Ապրիլի 2022թ. ժամը 10:00 |
| 11. | Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները) | 16 Սեպտեմբերի 2022թ. ժամը 16:30 Եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչև սույն կետում նշված ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է համարվում այն օրը, երբ տեղաբաշխվել է վերջին պարտատոմսը: |
| 12. | Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր | AMINECB29ER3 |
| 13. | Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի») | Ինելկոբանկ ՓԲԸ 2021թ" հոկտեմբերի 27-ի Խորհրդի Որոշում թիվ 260.4 Ինելկոբանկ ՓԲԸ 2022թ. ապրիլի 20-ի Տնօրինության որոշում թիվ 18 Ինելկոբանկ ՓԲԸ 2022թ. հուլիսի 20-ի Տնօրինության որոշում թիվ 31 |
| Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ | | |

| | | |
|-----|--|---|
| 14. | Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը | Արժեկտրոնները հաշվարկվում են թողարկման օրվանից: Պարտատոմսերի թողարկման օրն է 28.04.2022թ. : |
| 15. | Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը | Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ 10 % տարեկան, վճարման պարբերականություն՝ կիսամյակային: |
| 16. | Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի) | Թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը, այն է՝ 28 հոկտեմբեր 2022թ., 28 ապրիլ 2023թ., 28 հոկտեմբեր 2023թ., 28 ապրիլ 2024թ., 28 հոկտեմբեր 2024թ., 28 ապրիլ 2025թ. : |
| 17. | Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն) | Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում /Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual) Օրերի հաշվարկման պայմանականությունը Բանկի պարտատոմսերի համար համարվում է փաստացի/փաստացի , ընդ որում DCS = Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC = Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN = Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է. D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է: |
| 18. | Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը | ոչ կիրառելի |
| 19. | Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ | Արժեկտրոնի կուտակումը կատարվում է հետևյալ բանաձևով՝ $AI = FV \times \frac{C}{f} \times \frac{DCS}{DCC}$ Որտեղ՝ AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է, FV –մեկ պարտատոմսի անվանական արժեքն է, C-արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույքն է, f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2՝ կիսամյակային վճարումների դեպքում) |
| 20. | Զրոյական արժեկտրոնով (գեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | ոչ կիրառելի |


| Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ | | |
|--|---|---|
| 21. | Մարման ժամկետը | Պարտատոմսերի մարման օրը՝ պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 36-րդ ամսվա համապատասխան օրն է: Պարտատոմսերի մարման օրն է՝ 28 ապրիլի 2025թ. |
| 22. | Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը | 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ |
| 23. | Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում են այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն) | Չի նախատեսվում |
| 24. | Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | Ոչ կիրառելի |
| | ժամկետ(ներ)ը | 36 ամիս |
| | Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում) | Ոչ կիրառելի |
| | Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը | Չի նախատեսվում |
| | Այլ տեղեկություններ | |
| 25. | Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ / փուլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | Ոչ կիրառելի |
| | ժամկետ(ներ)ը | |
| | Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում) | |
| | Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը) | |
| | Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ | |
| 26. | Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը | Ինեկոբանկ ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 |
| 27. | Տեղաբաշխման այլ պայմաններ | Տեղաբաշխումը իրականացվում է բաց բաժանորդագրության միջոցով, որի |

| | | |
|-----|---|---|
| | | մանրամասները ներկայացված են Ազդագրի 2.4 կետում: |
| | Այլ տեղեկություններ | |
| 28. | Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը) | Արժեթղթերը դեռ թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին: |
| 29. | Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (ինարավորության դեպքում) | Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «ԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ: |
| 30. | Արժեթղթի վարկանիշը | Արժեթղթերը չունեն վարկանիշ |
| 31. | Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը | Պարտատոմսերի փաստացի ձեռքբերումն իրականացվում է Ներդրողի կողմից, Թողարկողի կողմից սահմանված Հայտ-հանձնարարականում նշված ծավալով պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցները Թողարկողի մոտ այդ նպատակով բացված 2050000013753691 դրամային տարանցիկ հաշվին մուտքագրելուց հետո: Ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի օպերատորից: |

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ
Արեն Նալթալյան


(ստորագրություն)

20.07.2022թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
Հայկ Ոսկանյան


(ստորագրություն)

20.07.2022թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Արտեմ Զիչյան


(ստորագրություն)

20.07.2022թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
Վաղինակ Խաչատրյան


(ստորագրություն)

20.07.2022թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Մանրածախ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Լևոն Ռուբինյան


(ստորագրություն)

20.07.2022թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ
Արշալույս Սահակյան


(ստորագրություն)

20.07.2022թ.
(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝
Արեն Նալթալյան Գործադիր տնօրեն

(անուն, ազգանուն) (պաշտոն)



20.07.2022թ.
(ամսաթիվ)

